ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 27/70 « 30 » 01 2020 թ.

Ձեր

«Դերձակ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 00885285)
տնօրեն Լ.Գրիգորյանին
ք. Երևան, Ավան Քուչակի 16/2
էլ. հասցե՝ derzak2013@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 24.06.2019թ-ին կնքված թիվ « ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-53/2» ծածկագրով հանդերձանքի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Դերձակ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի, այն պարագայում, երբ վերը նշված պայմանագրի շրջանակներում մատակարարի հետ 23.07.2019թ.ին կնքվել է համաձայնագիր, որով երկարաձգվել է պայմանագրի շրջանակներում մատակարարման ենթակա ապրանքների ժամկետները 30 օրացուցային օրով:

Մասնավորապես մատակարարը Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով և ժամկետներում չի մատակարարել 31 002 120 /երեսունմեկ միլիոն երկու հազար մեկ հարյուր քսան/ ՀՀ դրամի հանդերձանք:

Համաձայն Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի «բ» ենթակետի պահանջների համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Դերձակ» ՍՊԸ-ի միջև 24.06.2019թ-ին կնքված թիվ « ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2019-ՊՊԳՎ/ՀԱՆԴԵՐՁԱՆՔ-52/2» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից: ՀՀ ոստիկանության ՊՊԳ վարչության կողմից պայմանագրի 6.2 կետի համաձայն, վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար վաճառողից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվել է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0.05 տոկոսի չափով, որը պայմանագրի 6.4 կետի հիման վրա հաշվանցվել է:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 3 100 212 /երեք միլիոն մեկ հարյուր հազար երկու հարյուր տասներկու/ ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Դերձակ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Ոստիկանության գնդապետ **Ա.Ներսիսյան**

Կատարող՝ Բ.Փահլևանյան
Հեռ. 010 59 60 39